ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում, Գիրք Ա: Կրկնություն, *Երևան, ՀՀ ԳԱԱ "Գիտություն" հրատ., 2016, 608 էջ:*

Անդրանիկ Կարապետյանը ժամանակակից լեզվաբանության մեջ իր ուրույն ձեռագիրն ունեցող գիտնականներից էր: Հետաքրքրական էր նրան լսելը. լեզվական երևույթները մեկնաբանում էր նյութի ամբողջական խորքով, լայնքով ու շատ մանրակրկիտ: Այդպիսին էր էությունը. ճեղքել-հասնել իրողությունների խորքերը, դրանց տալ համակողմանի մեկնաբանություն:

Այժմ մեր սեղանին է Ա. Կարապետյանի "Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում" աշխատության Ա գիրքը՝ բ. գ. դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանի խմբագրությամբ:

Գիրքը նվիրված է ժամանակակից հայերենի ուշագրավ երևույթներից երկուսի՝ կրկնության և զեղչման բազմակողմանի քննությանը: Սա Ա. Կարապետյանի դոկտորական ատենախոսությունն է, որը, ցավոք, նա չհասցրեց տպագրված տեսնել: Աշխատության տպագրության նախաձեռնությունը պատկանում է որդիներին:

Հայտնի է, որ հայ լեզվաբանությունը վերջին ժամանակներում այլևայլ առիթներով և տեսանկյուններով հաճախակի անդրադարձել է տեքստի լեզվառճական վերլուծությանը: Եղած հրապարակումներում, սակայն, այս երկու իրակությունները, որ քննված են առաջադիր գրքում, չեն ներկայացվել համակողմանի լուսաբանման, չեն գրվել առանձին ուսումնասիրություններ կրկնության և զեղչման ոճական իրողությունների վերաբերյալ:

Ծանոթանալով աշխատության խորագրին՝ առաջին հայացքից արտասովոր է թվում այս երկու իրարամերժ երևույթների գիտական քննությունը միասնաբար: Մի դեպքում լեզուն փորձում է ընդարձակման, ասելիքն ավելի ծավալուն դարձնելուն, մյուս պարագային լեզուն ձգտում է սեղմության ու հակիրճության՝ տնտեսման օրենքի գերակայությամբ: Հեղինակն այս երկու իրողությունները քննում է առանձին-առանձին, նաև դրանց համատեղումը շարահյուսական միևնույն կառույցներում:

Հայտնի է, որ կրկնությունն անհամեմատ ավելի մեծ ընդգրկումներ ունի լեզվի շարահյուսական մակարդակում, սակայն առաջնորդվելով համամակարդակային ու համակարգային սկզբունքներով՝ աշխատության մեջ ներկայացված են կրկնության և զեղչման դրսևորումներն արդի հայերենի բոլոր մակարդակներում՝ հնչյութային, բառական, ձևաբանական:

Որպես ոճական երևույթներ՝ այս երկու իրողությունները ծառայում են խոսքի գեղագիտությանը, երբ հանդես են գալիս իբրև արտահայտչամիջոցներ:

Ա. Կարապետյանն անհրաժեշտաբար անդրադարձել է մի շատ կարևոր հարցի. խոսքը քերականական կարգերի հետ կրկնության և զեղչման առնչակցության մասին է:

Մինչև հիմա կրկնությունը և զեղչումը չեն դիտվել որպես քերականական կարգեր: Միայն Էդ. Աղայանի "Լեզվաբանության հիմունքներ" գրքում կրկնավոր բարդությունները ներկայացված են որպես քերականական արտահայտության միջոցներ: Իրապես, կրկնությունը, բառակազմական միջոց լինելով հանդերձ, շատ լեզուներում ծառայում է որպես քերականական արտահայտության միջոց: Աշխատության մեջ կրկնությունը, մասամբ նաև զեղչումը ներառված են քերականական կարգերի շարքում. այստեղ հեղինակն ունի իր հիմնավոր փաստարկները: Ա. Կարապետյանն իր ուսումնասիրության շրջանակն ավելի է ընդլայնել. կրկնավոր բարդությունները բաժանելով երեք խմբի և խորանալով դրանց համակարգային քննության մեջ՝ կատարել է բարդ բառերի այդ խմբերի ներքին դասակարգումներ՝ նպատակ ունենալով հստակեցնել արդի հայերենի կրկնավոր բարդությունների կաղապարային դրսևորումները: Կարելի է ասել, որ աշխատանքի այս հատվածը կարևորվում է արդի հայերենի բառակազմության ուսումնասիրության առումով:

Աշխատանքի ամենաստվար բաժինը 5-րդ գլուխն է, որ ներկայացնում է կրկնությունը շարահյուսական մակարդակում: Քննության են առնված նախադասության ոլորտում իրացվող բոլոր կրկնությունները՝ զատ-զատ ներկայացնելով նախադասության գլխավոր և երկրորդական անդամների կրկնությունները: Իրավացիորեն ընդգծվում է, որ ենթակայի և ստորոգյալի կրկնություններն ունեն ոչ միայն ոճական, այլև շատ հաճախ քերականական-կառուցվածքային նշանակություն:

Շարահյուսական մակարդակում իրացվող կրկնությունները քննելիս Ա. Կարապետյանը շրջանառության մեջ է դրել կրկնության շարք *տերմինը՝ նշելու համար միևնույն շարահյուսական կառույցում կամ խոսքի առավել լայն օղակում կրկնյալի ու կրկնորդի գծային շարակարգումը: Առանձնացնելով կրկնության երկու շարքեր՝ համասեռ և անհամասեռ, հեղինակը տալիս է դրանց արտահայտության ձևերն ու դրսևորումները խոսքաշղթայում: Կարևորություն է ստացել նաև կրկնության դերը բարդ նախադասության բաղադրիչների ու խոսքի բաղադրիչ ինքնուրույն նախադասությունների կապակցման գործում:*

Ճիշտ է նկատված, որ կրկնությունն ունի ոճական մեծ նշանակություն, իսկ գեղարվեստական խոսքում որպես լեզվաարտահայտչամիջոց հանդես գալու դեպքում այն զուտ ոճական երևույթ է: Գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներից շատերը պայմանավորված են կրկնությամբ և ձևավորվում են կրկնության հիմքի վրա:

Նշելի է, որ աշխատության մեջ հաճախ նոր մեկնակետերից են քննվել և լուսաբանվել հայերենի հնչյունաբանության, բառագիտության ու քերականության, մանավանդ շարահյուսության, ինչպես նաև չափածո խոսքի տեսության որոշ հարցադրումներ:

Ա. Կարապետյանի "Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում" աշխատությունն արժեքավոր ներդրում է հայ լեզվաբանության մեջ: Այն գիտական առատ նյութ կարող է տալ հետագա ուսումնասիրողներին:

2017 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում տեղի ունեցավ Ա. Կարապետյանի "Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում" Ա գրքի շնորհանդեսը: Առաջիկայում կտպագրվի նաև Բ գիրքը, որը զեղչման առավել ընդգրկուն ներկայացումն է:

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ